



ՈՆՅՐ. ԹՈՒՆԲԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ.
ՇՆՈՐՀԱԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆԾԱՅՈՒԱԾ ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարուայ մարտի 3-ին տրուեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, ուր ի մասնաւորի ասուած էր. «Երախտիքի նուիրական զգացումով այս տարի ոգեկոչում ենք Հայոց առաքելապատիւ Հայրապետ Սուրբ Ներսէս Շնորհալու վախճանման 850-ամեակը»¹: Բնականաբար, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բոլոր թեմերն ու կառույցները միահամուռ ձեռնամուխ եղան սրբադասեալ կաթողիկոսին նուիրուած միջոցառումների իրականացմանը: Հանդիսաւոր արարողութիւններից բացի, եղան նաեւ գրահրատարակչական նախաձեռնութիւններ, ինչը յոյժ ողջունելի է, որովհետեւ քիչ ժամանակ անց ցանկացած ճոխ հանդիսութիւն մոռացուելու է, իսկ տպագիր գործը դեռ երկար տարիներ կշարունակի օգտակար լինել սերունդների հայեցի կրթութեանը:

Նախ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը տպագրեց Լուսաւորչեան Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Մեսրոպ վրդ. Պարսամեանի «Լինել Աստուած (մարդու աստուածացման եռաստիճան ճանապարհն ըստ Ս. Ներսէս Շնորհալու վարդապետութեան)» գիրքը²: Շահէ ծ. վրդ. Անանեանի խմբագրութեամբ եւ «Սարգիս Գաբրիէլեան» հիմնադրամի հովանաւորութեամբ երկրորդ³ անգամ տպագրուող հատորը ներկայացնում է Ս. Ներսէս Շնորհալու քրիստոնէական վարդապետութեան, հայեացքների ամբողջական եւ համակարգուած վերլուծութիւնը մարդու աստուածացման վերաբերեալ: Հեղինակը նաեւ համադրել ու վերլուծել է Ընդհանրական եւ Հայ Եկեղեցու հայրերի ու վարդապետների տեսակէտները քրիստոնէական վարդապետութեան յիշեալ կարեւոր դրսեւորման մասին:

¹ Տէս «Էջմիածին», Գ., 2023, էջ 5:

² Սուրբ Էջմիածին, 176 էջ:

³ Առաջին հրատարակութիւնը նոյնպէս իրականացուել է Մայր Աթոռում 2015 թ.:

Միւսը Ներսէս Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»-ի եւ «Նամակա-նու»՝ «արեւելահայերէն թարգմանութիւնների» երկրորդ՝ վերանայուած վերահրատարակութիւնն էր⁴: «Թուղթ Ընդհանրական»-ը⁵ ժամանակին լոյս էր տեսել «Գանձասար» հանդէսի շրջանակներում, հետեւեալ նշմամբ. «Գրաբարից աշխարհաբարի վերածեցին Մեսրոպ քահանայ Արամեանը, Տիգրան Խաչատրեանը, Սեդա Ստամբօլցեանը»: Ներկայիս հրատարակութեան երկրորդ մասը՝ «Նամականի. հայ-բիւզանդական եկեղեցական բանակցութիւնները», Մայր Աթոռը տպագրել էր տաս-ներկու տարի առաջ⁶: Սեդա Ստամբօլցեանի թարգմանութեամբ: Ինչ-պէս տեսնում ենք, բաւականին ժամանակ է անցել երկու գրքերի նա-խորդ տպագրութիւններից, բնականաբար, բոլոր օրինակներն սպա-ռուել էին, եւ նոր հրատարակութիւններն ուղղակի պահի հրամայա-կան էին դարձել:

Առաջին հայեացքից կարող է վերահրատարակութիւն թուալ նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանի եւ Մասեացոտնի թեմի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Սարոյեանի յառաջաձեռնութեամբ Մոսկուայում եւ Վաղարշապատում հրատարակուած «Ներսէս Շնորհալի. Հանելուկներ» գրքոյկը⁷: Նշենք, որ ժամանակին «Սովետական գրող» հրատարակչու-թիւնը 30 000 օրինակով տպագրել էր երգեցող կաթողիկոսի հանելուկ-ների մի ծաղկաքաղ⁸. Թուաքանակ, որ այսօրուայ պայմաններում գրե-թէ չի շրջանառում: Հանելուկների այդ ժողովածուն կազմել, տողացի փոխադրութիւնը պատրաստել եւ առաջաբանը գրել էր «Էջմիածին» ամսագրի երբեմնի զլխաւոր խմբագիր եւ Գէորգեան հոգեւոր ճեմարա-նի հայ հին գրականութեան դասախօս Արշակ Մադոյեանը: Իսկ ԽՍՀՄ գրողների միութեան անդամ, բանաստեղծ, արձակագիր, թարգմա-նիչ Էդուարդ Աւագեանն իրականացրել էր հանելուկների (մատենագի-տական ձեւակերպմամբ) «գեղարուեստական թարգմանութիւնը»: Վե-

⁴ Սուրբ Էջմիածին, 424 էջ:

⁵ «Գանձասար» հանդէս, 124 էջ, Երեւան, 1991:

⁶ Սուրբ Էջմիածին, 320 էջ:

⁷ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ սրբատառ կոնդակով 2021 յունուար 11-ին Արարատի մարզում հիմնուած Մասեացոտնի թեմում արդէն 5 հրատարակու-թիւն է եղել (սրբերի վարքեր, աղօթագրքեր եւ մէկ ուսումնասիրութիւն), որ եւ առաւել ար-գասագրեր ընթացք ենք մաղթում ի սէր եւ ի շահ Եկեղեցու եւ հաւատացեալների:

⁸ Երեւան, 1984, 32 էջ:

րահրատարակութեան վերաբերեալ կասկածներն սպառելու համար ասենք, որ նախորդ օրինակից լոկ երկու հանելուկ է «կրկնուում» ներկայ հրատարակութեան մէջ՝ կատուին եւ արեւին նուիրուածները⁹, որ բանաստեղծական բոլորովին նոր հանդերձաւորմամբ են ներկայանում: Փորձելով դիւրանկատ դարձնել ասուածը՝ բերենք յիշեալներից մէկը՝ նորի ու հնի զուգակցութեամբ, նախապէս դնելով նաեւ սրբազան հեղինակի բնագիրը.

Որպէս տիկին յուշիկ գնայ,
Պարան ետեւ ի քառք կու տայ,
Բազմի յոսկի բարձի վերայ,
Որսիկ առնէ քան զբազայ:

Նոր	Հին
Տիկնոջ նման յուշիկ քայլում, Հետք պարան է ման ածում, Ոսկէ բարձին բազմում է վէս, Եւ որս առնում քաղէի պէս:	Ամբողջ օրը տանը մնում Բեհեզ բարձի վրայ քնում Հէնց որ մուկ է տեսնում յանկարծ Բազէի պէս որս է առնում:

Մնացեալ 32 հանելուկներն առաջին անգամ են հրատարակուում արեւելահայ շարադրմամբ: Սակայն նորոյթն այսքանով չի սահմանափակուում: Դիտարկուող հրատարակութեան մէջ Ներսէս Շնորհալու հանելուկներն առաջին անգամ ռուսերէն եւ անգլերէն թարգմանութիւններով մատուցուում են օտար ընթերցողին: Եւ ճիշտ տեղն է նկատելու, որ 25/9 յարաբերակցութեամբ անգլերէն թարգմանութիւնն իրականացրել են ճեմարանի նախկին աշխատակից Արմէն Սարգսեանն ու «Էջմիածին» ամսագրի գլխաւոր խմբագիր Գէորգ Մադոյեանը: Վերջինս հանդէս է եկել նաեւ իբրեւ ռուսերէնի թարգմանիչ: Սա կարող ենք անակնկալ համարել, որովհետեւ երկար տարիներ Գ. Մադոյեանին ճանաչելով հանդերձ՝ տեղեակ չենք եղել նրա բանաստեղծական հակումների մասին՝ առաւել եւս, որ ի զօրու է այդ կարողութիւններն ի գործ դնելու նաեւ օտար լեզուներով: Իսկ գրքոյկի վերաբերեալ պատկերն ամբողջացնելու համար քաղուում ենք կատուի հանելուկի ռուսերէն եւ անգլերէն տարբերակները.

⁹ Համապատասխանաբար՝ էջ 27 եւ 33:

Неторопливая походка, И взгляд на всех из высока, А под рукой всегда бечевка, Чем заведет мышей в капкан Охотник быстрый как орлан.	It's always carrying a long rope At any moment it can swoop. For catching mice it's always eager It's hunting like a desert eagle.
--	---

Որքան մեծ է հոգեւոր-մշակութային ժառանգութիւնը, այնքան աւելի մեծ են մեր պարտքն ու պատասխանատուութիւնն անցեալի անանց արժէքների հանդէպ. հանգամանք, որ պէտք է յիշենք ու գիտակցենք նաեւ անկախ ամեակներից ու յոբելեաններից: Պատուիրան, որ սրբօրէն պահուում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ իր աշխարհասփիւռ թեմերում:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

